Է. ՏԱՐԻ
ՇԱԲԱԹ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1904
ԹԻՒ 666

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ ե. երկրին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ Yarna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԻՆՉՈ՞Ւ ԱՅԴՉԱՓ ԱՊԵՐԱԽՏ ԵՆՔ

—)o(—

Ամեն տգէտ—դեռ բոլորովին չը քաղաքակրթված ժողովրդի մէջ հասարակութեան յառաջդիմութեան գործին նուիրված մարդիկ ոչ միայն իրենց ուժեղ ժամանակ քաջալերութեան, արժանաւոր վարձատրութեան չեն արժանանում, այլեւ ուժասպառ ծերութեան օրերին հասած միջոցին բոլորովին մոռացվում են։

Այդ յուսահատական, երիտասարդների հասարակական գործի ասպարէզ նետվելու տրամադրութիւնը մեռցնող երեւոյթը աւելի սուր կերպարանք ունի հայերիս մէջ։

Այսօր Վառնայում ապրում է 40 տարվան դերասանուհի տիկին Թաուլաճեանը։ Քառասուն տարի առաջ մի հայ աղջիկ, իրեն պէս մի երկուսի հետ յանդգնել է ամէն ինչ ոտքի տակ տալ և նուիրվել հայ բեմ ստեղծելու գործին. երկար տարիներ նա բարոյական և կրթիչ ազդեցութիւն է ունեցել մեր ժողովրդի զանազան խաւերի վրա, Ծաճկաստանում, Կովկասում և Բուլգարիայում. իսկ այսօր, իր ծերութեան օրերում, բոլորովին անտէր, անօգնական և մոռացված է։

Տիկին Թաուլաճեան լինելով աշխատասէր և ոչ մուրացիկ կին, իր ծերութեան օրերում, ուժը կորցրած աչքերով ինքզինքը պահել է կարելով և ասեղնագործելով. ու Վառնայի փարթամ հարուստ կանանց և օրիորդների մէջ չէ գանվել մի կին, չէ գտնըւել մի օրիորդ որ կարող լինէր իր սեռակից, հայ գեղարւեստին ծառայող տիկին Թաուլաճեանին ձեռք կառկառել։

Այսօր մեղուի նման աշխատող տիկին Թաուլաճեանը, իր անզօր աչքերով, աղքատութեան բոլոր զրկանքներին տոկալով, պատրաստել է մի չափ գեղեցիկ ասեղնագործ նկար, Տրդատ թագաւորը, Գրիգոր Լուսաւորիչը և Խոսրովադուխտը, որը կարող է արժել 400—600 ֆրանկ. և Վառնայի հարուստ տիկնանց ու պարոնների մէջ, որոնք հարիւրաւոր ֆրանկներ նետում են ամենայիմար բաների համար, չը կայ մէկը որ գնէ այդ գեղեցիկ նկարը և տիկին Թաուլաճեանին միջոց տայ իր հալալ քրտինքով լի աշխատութեան արդիւնքով գալիք ձմեռը անցնէ։

Ամօթ հայ հասարակութեան, ամօթ հայ նորահաս տիկիններին, որոնք մինչեւ օրս չեն մտածել իրենց աշխատաւոր սեռակցի ծերութեան գժւարին օրերը մեղմացնել գոնէ մի փոքր չափով։

Մենք Վառնայի երիտասարդ տիկիններին և օրիորդներին կառաջարկենք իմի հաւաքվել, գնել անմիջապէս այդ գեղեցիկ ասեղնագործը. նւիրելով նաև Պուլկարիոյ ուրիշ քաղաքների հայ տիկնանց և օրիորդներին, նկարը նւէր ուղարկել Հայրիկին, որ այնքան եռանդով կարողացաւ պաշտպան հանդիսանալ էջմիածնին, որի առաջին հիմնաքարերը դրել են հենց իրենք՝ Խոսրովիդուխտը և Տրդատը, որով թէ Հայրիկին ուրախացրած կը լինեն և թէ տիկին Պայծառ Թաուլաճեանին ապրելու մի փոքրիկ դիւրութիւն տւած կը լինեն։

ՎԱՐԴՈ

ԲԱՐԵԳՈՐԾԵ՞Լ ԹԷ ՇԱՀԱԳՈՐԾԵԼ

——

Եղիք ուր որ կուզէք՝ Կովկաս կամ Բարիզ, Ամերիկա կամ Պուլկարիա, Կալկաթա կամ Պոլիս, հայկական իրականութիւնը միշտ միեւնոյն անփոփոխ երեւոյթով կը ներկայանայ ձեր առաջ. գծուծ հաշիւներով տըգեղ, անմիտ սնապարծութեամբ ծիծաղելի՝ վրդովեցուցիչ անտարբերութեամբ ու եսասիրութեամբ զայրացնող։

Քիչ չեն եղած եւ չեն ալ լինելու դժբախտաբար ապագային՝ շնորհիւ խնկարկուներու անմիտ ամբոխին՝ այնպիսիներ, որոնք բարեգործութեան մը դիմակին տակ պահ մը թագնուած, հիացման մրմունջներ են խլած, գերմարդի մը լուսապսակով իրենց ճակատը պճնելով, որուն տակ սակայն ապահովաբար ոչ մի վեհ գաղափար չէ ծնած, եւ ուր ծըփացող մաքերը եթէ կարողանայինք գուշակել, գուցէ գովեստները՝ այնքան առատօրէն շռայլած մեր շըթունքներուն վրայ սառէին, ու մեր անխառն երջանկութեամբ մը լեցուած սիրտը թոյնի բաժակի մը փոխարկւէր, պատրաստ դուրս յորդելու։

Չեմ գիտեր թէ ինչպէս կարելի է բնորոշել այդ բարեգործութիւնը, որուն սակայն մեր պապերը սապէս են բնորոշած:

—Դգալով կը տայ, կոթով աչքդ կը հանէ։

Դժբախտաբար պիտի ստիպուիմ միեւնոյն դարձուացքը գործածել պ. Էգնաեանի՝ պատ. Թումայեանի յայտնի որբերու որդեգրողի մասին, որուն բարեգործութիւնը մինչեւ այսօր այդ խեղճ ու անօգնական պատանիներուն դրական առաւելութիւն չը տալէ զատուած է եւ մինչեւ այսօր դեռ կը տայ բացասական եւ տխուր փաստեր միայն։

Որբերը պատ. Թումաեանի ձեռքէն զանազան գեղեցիկ խոստումներով առնելէն ի վեր, պատանիներու դրութիւնը ոչ մի բարւոքում, ոչ մի առաւելութիւն չէ կրած ա՛յն մաքով, ինչ մտքով որ եղած են այն փայլուն խոստումները զանազան գիտութիւններ, արհեստներ, մասնագիտութիւններ սորվեցնելու, որոնց համար վճռւած տարեկան 40.000 ֆռ.ի գումարը մնացած է լոկ խոստում, որը յանգած է պ. Էգնաեանի ադամանդի գործարանին, ուր որբերը ստիպւած են այսօր աշխատելու օրական տասը ժամ միօրինակ եւ ամուլ մասնագիտութեան մը մէջ, որը ոչ մի չահ կրնայ տալ օր մը իր հայրենիքը, իր օճախը վերադառնալու յոյսով օրօրւող որբ պատանիին... միեւնոյն ժամանակ այդ առողջ կազմւածքը գործարանի մը մթնոլորտին մէջ։ Սակայն իրականութիւնը միայն այդ չէ՛։

Որբերու հետ անձամբ տեսակցութիւն մը կը բաւէ ձեզ իմացնելու թէ այդ անտուն եւ անօգնական պատանիները ամէն ինչ են եղած՝ գործաւոր, սպասաւոր, ծառայ, կտոր լըւացող... այո՛, կտոր լւացող... բայց երբե՛ք որդեգիր։

Գեղեցիկ է անշահախնդրութեան ու վեհանձնութեան սիրուն ասպետական շարժումով մը պաշտպանել ինը-տասը որբեր որոշ պարտականութիւններ ստանձնելով... բայց ե՛րբ այդ առթիւ մամուլի մէջ շռայլւած գովեստները, ովսաննաները ըմբոշխնելէ յետոյ, այդ որբերը կը նետուին գործարանի մը չորս պատերուն մէջ, վերակացուներու քմահաճոյքին առարկայ՝ որոնք նոյնիսկ Զատկի շաբաթ իրիկուն եկեղեցի երթալու անմեղ եւ արդար փափագին՝ յայտնուած որբի մը կողմէն՝ կը պատասխանեն զայն հինգ-վեց ժամ խոնաւ նկուղի մը մէջ բանտարկելով... բայց ե՛րբ անոնց յատկացւած սնունդի դրամին մէկ մասը վերակացուներու գրպանը կը մտնէ ի վնաս որբերու ստամոքսին... բայց երբ զանազան առիթներով որբերու կողմէն բարձրացած բողոքները կը խեղդւին բռունցքի հարուածներու տակ... բայց ե՛րբ վերջապէս այդ վայրենութիւնները դեռ կը շարունակւին մինչեւ այսօր՝ երբ պ. Մօզեանի մը հարւածներուն տակ որբերէն մէկը կը նւաղի քիթը բերանը արիւնաթաթաւ... այդ ժամանակ կըսեմ, պ. Էգնաեանի անտարբերութիւնը կը դառնայ դատապարտելի. կասկածեցնել տալով մեզ եւ ամբողջ հայ հասարակութեանը այն անշահախնդրութեան եւ վեհանձնութեան մասին, որը ուզած է ցոյց տալ որդեգրելով այդ խեղճերը։

Չեմ կրնար չարգիլել զիս քանի մը կտորներ նոյնութեամբ ընդօրինակելէ այն խնդրագրի պատճէնէն, որը երկու ամիս առաջ որբերու կողմէն ղրկուած է Ն. Վ. Սրբ. Կաթողիկոսին, ուր երկարօրէն եւ սրտայոյզ շեշտով մը պարզուած է յուսաթափութեան մը անհուն դառնութիւնը, վարդ-երազներու անէացումը։

Խնդրագրի տողերը աւելի պերճախօս են։

Դատեցէ՛ք։

«Վեհափառ Հա՛յր, ցաւօք սրտի այս երկու տարի է լսած ենք որ վշտերի էք մատնւած, հետեւապէս չէինք ուզում մի ցաւ էլ մենք աւելենք, այս պատճառով համբերութեամբ տանում էինք ամէն մի զրկանք, որոնց եթէ այստեղ յիշենք շատ երկար կը լինի. սակայն այսօր միանգամայն Ձեր Հայրական Սուրբ հայեացքը մեզ դարձուցէք, եւ լսէք թէ իրենց ո՞ր մէկ ասածը կատարում են. հաւատացէք ո՛չ մէկ. եւ ահա երկու տարին լրանում է, դեռ ոչ մի բան չենք սովորել, մինչեւ անգամ ֆրանսերէն լեզուն, որ ամենաբթամիտ մարդն անգամ կարող է սովորել մի տարւան մէջ. եւ Ձերդ վեհափառութիւնը պիտի ցաւի «չսովորել» բառը մեզանից լսելով, որովհետեւ դուք այն օր մեզ ճանապարհ դրիք լի օրհնութիւններով... եւն.»

Փիչ մը հեռուն.

«Սակայն ափսոս, Հայրիկ որ մեր չորս տարուան ոսկեդինիկ ժամերը անաղզոգուտ ադամանդի արհեստին պիտի նուիրենք, եւ մեր հայրենիքը դառնալով նորից նոյն տգէտներն ենք, որովհետեւ փայլուն ադամանդը չի կարող լուսաւորել հայ տգէտին...»

Քանի մը տող վարը.

«Մեր ծնողքը կը հայհոյեն(*) մեզ կը ծեծեն, երբ ողբալով վերակացուին մօտ կերթանք (որն հայ է) մեզի կը վոնտէ, մեր իրաւունքը ոտնակոխ անելով եւ մեր ազգը հայհոյողին պաշտպան կանգնելով...

«Ձենք կարող մի թեթեւ պակասութիւն յայտնել, իսկոյն մեզ վերայ կը յարձակուին, նախատելով մեզ եւ իրենց կերպուցած հացին համար երես տալով...»

Կարծեմ բաւական է, աւելորդաբանութիւններ հարկաւոր չե՛ն.

Ցանկալի էր՝ Պ. Էդնաեանին նոյնիսկ իր պատուոյն համար որ այդ վայրենի վերաբերմունքները վերջ գտնէին դէպի անոնք՝ որոնք արդէն ճակատագրական մեծ հարուածին դրոշմը կը կրեն իրենց դալուկ ճակատին վրայ՝ կրկնակի մեր համակրանքին եւ խնամքին արժանի դարձնելով, եւ վերջապէս այնքան աղմուկով հրապարակ նետուած եւ պաշտօնապէս ստանձնուած գարտակնութիւնը, այն է՝ այդ որբերուն տալ կատարեալ կրթութիւն մը եւ տարբեր մասնագիտութիւններ՝ գործադրուէր բարեխղճաբար եւ ազնուաբար, առանց անիմաստ պատճառաբանութիւններու եւ վարանումներու, որոնք մեզ պիտի ստիպէին դժբախտաբար կասկածիլ պ. Էդնաեանի անկեղծութեան վրայ, ապագային ստեղծելով բարդութիւններ, որոնք անպայման պատուարեր չէին ըլլար իրեն.

Ց. Գ.—Այս գրութեան մէկ օրինակը ղրկուած է Թիֆլիզի «Մշակ» օրաթերթին.

Հր. Աշեանամ

Բարիզ 15/27 հոկտ.

(*) Ֆրանսացի գործաւորներու մասին է.

ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՐ ՄՏԱՒՈՂՆԵՐՈՒՆ

(Շար. նախորդ թիւեն)

Նոյն «Ազատ Բեմը տարի մը առաջ (5 սեպտ. 1903, թիւ 20) Երուանդ Օտեան ստորագրութեան տակ գրած է.—«Որովհետեւ ճամբու դրուածները (ուսուցիչներ) փաշաներու, բէյերու կամ էֆէնտիներու շարքին մէջ պաշտպաններ չունին, մինչդեռ պաշտօնի վրայ պահուած ապիկարները կը վայելեն այս կամ այն փաշային, պէյին կամ էֆէնտիին հովանաւորութիւնը։ Ու Եգիպտոս այն գերազանցապէս չքնաղ երկիրն է ուր փաշայի մը կամ պէյի մը հովանաւորութիւնը վայելող որ եւ է տգէտ ու անկարող մէկը կրնայ տարիներով վարժուհի կամ վարժապետ ըլլալ ուլեցուն–լեցուն ամսականներ առնել եկեղեցիին սնտուկէն, առանց վախնենալու թէ օր մը գինքը դուրս պիտի նետեն։ Եգիպտոսի ազգային վարժարանները ո՛չ թէ տղաքը կըրթելու սահմանուած հաստատութիւններ են, այլ ապաստարաններ, անկեյանոցներ փաշաներու եւ պէյերու պաշտպանեալներուն համար։ Վերջապէս Գահիրէի եւ Ալեքսանդրիայի եկեղեցիներն ու դպրոցները, կալուածներն ու բարեգործական հաստատութիւնները ազգին չեն պատկանիր, այլ կարգ մը խեղկատակ, պնակալէզ, ՝ՀՔԾՆող ու չողոքորթ ապարածներու որոնք հեռուէն կամ մօտէն, ուղղակի կամ անուղղակի, խոստովանելի կամ անխոստովանելի միջոցներով փաշա մը կամ պէյ մը ունին իրենց կռնակը։»

Հիմա լրջամիտ եւ անկողմնակալ ընթերցողը թո՛ղ բաղդատէ այս գրուածքը մեր գրածներուն հետ եւ եթէ գտնէ երկու արտայայտութեանց մէջ տարբերութիւններ, թող բարեհաճի մեզ ցոյց տալ։ Մենք ոչ մի տարբերութիւն չենք գտներ այս երկուքին մէջ. ճշմարտութեան եւ մտքի արտայայտութեան տեսակէտով, կարծես թէ մին միւսին ընդօրինակութիւնն է, սա տարբերութեամբ, որ մենք անբարոյական եւ պոռնիկ բառերը չեշտեր ենք, իսկ Երուանդ Օտեան խոստովանելի եւ անխոստովանելի միջոցներ» բառերը. պոռնիկ բառը իր նշանակութենէն շատ բան կը կորսնցնէ եթէ՝ «ի՞նչ են անխոստովանելի միջոցները»... հարցը տանք որոնց մէջ կարող են մտնել պոռնիկութենէ աւելի ծանր արարքներ եւ նոյնիսկ ոճիրներ՞.՞.։

Ա՛րդ, ո՞ւր էին այն ժամանակ, երբոր Երուանդ Օտեան այս տողերը գրեց, այո՛, ո՞ւր էին մեր դէմ խօսող խելացի պարոնները, ի՞նչու համար այն ժամանակ նոյն աղմուկը չը բարձրացուցին, նոյն նախանձախնդիր ոգին ցոյց չը տուին...

Գուցէ տղայաբար առարկեն թէ «Ազատ Բեմի» նախորդ վարչութեան օրով գրուածներուն նոր վարչութիւնը պատասխանատու եւ համամիտ չէ, թէ նոր վարչութիւնը տարբեր ուղղութիւն ունի, եւայլն։

Սակայն այս միամիտ առարկութիւնը փաստ մը չէ հերքելու մեր ըսածներուն ճշմարտութիւնը. նախ ընթերցողը պարտաւոր չէ թերթին վարչութեան եւ ուղղութեան փոխուելուն հետ փոխել նաեւ իր ուղղութիւնը. եթէ երբէք թերթին ուղղութիւնը փոփոխութիւն կրած է, այդ բանը նոր վարչութիւնը պարտաւոր էր կանխաւ յայտարարել իր ընթերցողներուն։ Երկրորդ՝ խնդիրը թերթի ուղղութեան վրայ չէ, այլ այն անհերքելի իրողութեանց վրա՝ թէ ինձմէ առաջ նոյն իսկ «Ազատ Բեմ»ի մէջ գրուած են այն բոլոր բաները, զորս ես յիշեր էի «Մշակ»ի մէջ։ Երրորդ՝ խմբագրութիւն մը պարտաւոր է գիտնալ իր քննադատած խնդրին անցեալին մէջ ինչ փուլերէ անցած ըլլալը. եռանդը, երկու տող հայերէն գրելը բաւական չէ թերթ մը խմբագրելու. փորձառութիւն, հմտութիւն, սկզբունք, որոշ ուղղութիւն եւ խմբագրական

ՁԻՆԻՈՐԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Նվիր Կովկասեան նորակոչներին)

Հոկտեմբեր 30-ն էր. Ա. քաղաքի ժողովուրդը այդ օրը ինչ որ արտասովոր շարժման մէջ է։ Հեշտ չէ ասել, 60-ի չափ նորակոչ հայ զինուորների պէտք է ճանապարհ դնէին դէպ լայնածաւալ Ռուսաստանի հեռաւոր կողմերը. Քաղաքից դուրս, դէպ Բորժոմ տանող խճուղու վերայ, հաւաքուած էր բաւական բազմութիւն։ Ցընծուր թախիծը պատել էր ամենի դէմքին. լալիս էին բոլորը՝ թէ գնացող և թէ մնացող։ Ո՞վ գիտէ, 4 տարի չարքաշ զինուորական կեանքի մէջ ինչե՞ր են առաջանալու. կրկին տեսնելու են՝ թէ ո՞չ. կարծես նրանք մեզ ուղարկում էին դէպ մահուան գիրկ. արցունքը հոսում էր ինչպէս հեղեղ։ Մենք բաժանվեցինք. Նորակոչները առողջ, մաքուր և փոքր ի շատէ համեստ կեանքի տէր տղերք են։ 250 տղաներից հազիւ 60-ի չափ դուրս եկան առողջ կազմուածքով. մնացածները կազմում էին արատաւորութիւն ունեցողները, փախստականները, բնական արատաւորները և կամ ինքնիրենց արհեստական կերպով արատաւորողները.

Տասնի չափ արագընթաց կառքեր սլանում էին մինը միւսի յետեւից. գնում ենք Բորժոմ. Պարզ լուսնային գիշեր, անտառապատ վիթխարի ձոր, արծաթափայլ օձապտոյտ մեծ գետ—ահա մեզ շրջապատող հայրենի բընութեան փարթամ տեսարանները, որոնցով վերջին անգամ գմայլում էինք և տխուր սրտով ուղղում նրանց մեր վերջի «մնաս-բարեաւ»ը։ Տայոց աշխարհի այս հրաշալիքները չէին կարող լիովին գրաւել իմ ուշքն ու միտքը, որոնք սլացել էին մի այլ կողմ՝ դէպ պաշտելի Շիրակ—ուր թողած եմ ծնողք սիրելիք, ընկերներ, Հանգամանքներից ստիպուած՝ միայնակ գալով Ախալցխա և ներկայանալով զինուորակոչութեան, ինձ համար անսպասելի կերպով ընկայ զինուոր։ Եւ ահա երբ երկար ժամանակով պէտք է հեռանայի քաղցր ծննդավայրից, ես անկարող էի վերջին անգամ տեսնել ինձ համար թանկագին էակներին։ Ինձ շրջապատող տղաները անծանօթ էին, բացի մէկից. Այս էր պատճառը, որ մինչ նրանք արտասուում էին, ես անզգայ նայում էի նրանց։ Պատահած իրողութիւնները ինձ թւում էին երազ. ես չէի կարող հաշտվել այն մտքի հետ, թէ գնում եմ զինուորութեան և պէտք է ծառայեմ 4 երկար և ձիգ տարիներ։

Հասանք Բորժոմ՝ Կովկասի հրաշագեղ ամարանոցներից մինը. այստեղից մեր մի փոքր մասը՝ Թիֆլիսի վերայով՝ պէտք է գնար Անդրկասպեան երկիր, իսկ միւսը, որի մէջ գտնուում էի նաեւ ես, Բաթումի վերայով դէպ Եւրոպական-Ռուսաստան (Կիշնեւ)։

Հետեւեալ օրը մենք ճանապարհ դրինք Անդրկասպեան երկիրը գնացող տղաներին։ Միւս օրը մնացածներս՝ թիւով 48՝ պատրաստուեցանք ուղեւորվելու Բաթում։ Գնացքը պատրաստ կանգնած էր. մեզ ոչխարի նման լցրին մի վագոն։ Հազիւ կարողացանք տեղաւորեցնել մեր իրեղէնները. մեծամասնութիւնը կանգնած մնաց։ Սակայն նորակոչները զոհ էին, որ միասին լինելով կարող էին անցկացնել ուրախ ժամանակ։ Երկաթուղին չարժվեց առաջ։ Ո՛հ, ո՞րպիսի՞ արագութեամբ պտոյտներով սլանում էր նա խոր ձորի միջով՝ անգթաբար հեռացնելով մեզ մեր հայրենի վայրերից։ Տղերքը կրկին ըզգացվեցին. ահա նրանցից մինը թախծալի և դուրեկան ձայնով երգեց «Էջ՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից». ես անկարող եղայ զսպել յուզմունքս, դուրս եկայ վագոնի փոքրիկ գաւիթը և՝ յենվելով լուսամուտին՝ սկսեցի արտասուել...

Անցանք գեղանի Վրաստանը. մօտենք Բաթումին. երեկոյ է. տխուր դո՛ւրս եմ նայում վագոնի լուսամուտից. մի կողմում սկսած երկաթուղու ցցից՝ տարածուում են անեզր ծովի կապուտակ ջրերը. միւս կողմից ձգուում է անտառը։ Երկաթուղին, արտաշնչելով հուր և ծուխ, օձային դալարումներով, պատառելով և ծով և անտառ սլանում է դէպ առաջ. տեսարանը հրաշալի է։ Հասանք Բաթում։ Ճանապարհին մեզ ուղեկցում էր մի ռուս ենթասպայ. նա առաջուց հեռագրով իմաց էր տուել Բաթումի զինուորական վարչութեան, որը կայարան էր ուղարկել մի քանի զինուոր՝ մեզ առաջնորդելու տեղական զօրանոց։ Մենք չալակեցինք մեր ծանր իրերը և հետեւեցինք զինուորներին։ Զօրանոցում մեզ առանձին տեղ տրուին գիշերելու համար։ Բոլորս հաւաքվեցինք ռուս ենթասպայի շուրջը՝ մեզ ստուգելու համար. ոչոք պակաս չէր։ Զօրանոցի այն մասը՝ ուր տեղաւորվեցանք մենք, ներկայացնում էր մի ընդարձակ սրահ լուսաւորուած մի մոմով։ Մահճակալներ չկային. մենք ստիպուած էինք պառկել գետնին։ Ո՛հ, ո՞րքան տխուր և անհանգիստ էր առաջի գիշերը մռայլ զօրանոցում։ Նա դեռ երկար ժամանակ վառ է մնալու յիշողութեանս մէջ։ Երբեմն զարթնում էի. սկզբում ապուշի նման նայում էի այս ուսի կողմ և զարմացած հարց տալիս, ո՞ւր եմ ես. Մոմը աղօտ կերպով լուսաւորել է. նայում եմ պատերին, հայեացքս նետում եմ առաստաղին, աւելի և աւելի ապշում եմ. Փնտռելիս մի քիչ բարձրանալով նայում եմ շուրջս. տեսնում եմ շարքով քնած տղաներ, որոնցից ոմանք ծածկված են վերմակով, ոմանք էլ չինելով (՝). Սթափվում եմ, ես զինուոր եմ և գրանցուում եմ զօրանոցում. սակայն ծանրացած քունը նորից փակում է աչքերս և անայտացնում զօրանոցի խորհրդաւոր և մռայլ տեսքը։

Առաւօտեան զարթնեցինք շատ ուշ. մեզ ստիպող չկար վեր կենալու. ժամը 9-ին կրկին հաւաքվեցինք ռուս ենթասպայի շուրջը դարձեալ մեզ ստուգելու համար։ Բոլորը ներկայ էին։ Նոյն օրը երեկոյեան Բաթումից դէպի Օտեսա մեկնող շոգենաւով պէտք է մեկնէինք նաեւ մենք. այդ պատուն մեր չար բաղդից երկինքը պատվեց թուխ ամպերով. սկսեց անձրեւել, որը հետզհետէ առատանալով, ինչպէս հեղեղ, թափուում էր վերեւից։ Որքան մենք խնդրեցինք մեզ թոյլ տալ մեր ծանր քով կառք նստած երթալ նաւահանգիստ, թոյլ չ՝տուին։ Մենք ստիպուած էինք կրկին չալակել մեր ծանր բեռները, անձրեւի տակ կտրել ահագին տարածութիւն և գընալ նաւահանգիստ։

Նաւահանգստում խռնուած էր անագին բազմութիւն. իրար սեղմելով, հրելով, մենք լցվեցինք նաւի մէջ։ Մեզ յատկացրին շոգենաւի այն ներքին մասը, ուր տեղաւորում են ապրանքները։ Դժբաղդաբար ապրանքները նաւի մէջ տեղ դասաւորած լինելով, մենք ստիպուած էինք տեղա-

(*) Զինուորի լայն վերարկու։

կոչում ունեցող մէկը միայն կրնայ ըմբռնել մամուլի եւ տպագրական խօսքի սրբութիւնը. «Ազատ Բեմ»ի գրչակները բացարձակապէս այդ բոլոր բարեմասնութիւններէն զուրկ ըլլալնին ապացուցին ։

«Ազատ Բեմ»ի գրչակները սպառնաւոր էին գիտնալ, որ Պօղոսեան վարժարանին մէջ պաշտօնավարող ուսուցչուհի Տիկին Մառի Պէյլէրեան, ժամանակին բողոքած է հոգաբարձութեան անդամներէն Տիար Կարապետ Տէվրիշեանին եւ առաջնորդարանի պաշտօնեաներէն մէկուն, իրաւացի կերպով յայտարարելով, որ վարժուհիներէն մէկուն արարքը եւ վարքն ու բարքը օրիորդներուն բարոյականը կը խանգարեն եւ թէ պատիւ չը բերեր այդպիսի անբարոյական ուսուցչուհիի մը ներկայութիւնը կրթական սուրբ յարկին մէջ։ Հոգաբարձուին պատասխանը եղած է —«Փաշային կը յայտնենք», եւ դեռ պիտի յայտնուի՞...

Կառարկեն թէ ամէնքը մէկ ջրով լուացեր ենք, առանց բացառութիւններ յիշելու ընդհանուր կերպով անպատուեր ենք երկու դպրոցներու ուսուցչական խումբը, եւայլն ։ Սակայն լրագրական բարքերուն մէջ ընդունուած սովորութիւն մըն է, որ երբ հասարակական հաստատութեանց մէջ կատարուած ու եւ է զեղծում, վնասակար եւ վատ արարքներ մատնանիշ ըլլան, այնտեղ մասնաւորներ աւելորդ են. Պոլսոյ եւ Կովկասի լրագրութեան մէջ միշտ գրուած են ընդհանուր մտքով քննադատականներ ազգային այս կամ այն հաստատութեանց վրայ, օրինակ պատրիարքարանը «պաթախանէ» կոչած են եւ Ս. Էջմիածնայ միաբանութիւնը «մակաբոյծներ եւ ծոյլեր», եւն ։ Դեռ այս օրերս պ. Աւօ «Մուրճ»ի նօ. 7ին մէջ «Եգիպտահայերու» մասին գրած իր յօդուածին մէջ դըպրոցներու եւ լրագրութեան վրայ ճիշդ մեր ըմբռնած եղանակով, առանց բացառութիւնները յիշելու, ընդհանուր կերպով ձաղկած էր ինչ որ վատ եւ վնասակար տեսեր էր. ստորեւ նոյնութեամբ մէջ կը բերենք պ. Աւօի գրածները ։— «Երկու քաղաքներու (Գահիրէ եւ Աղեքսանդրիա) մէջ եւս մեր ազգ. դպրոցները կը կառավարուին կրթական գործէն բացարձակապէս անտեղեակ հոգաբարձուներով, որոնց ձեռքին մէջ «թուլամորթ ուսուցիչներ գործիք եղած՝ բութ դանակներով կը խողխողեն ազգին մատաղ սերունդը պատրաստելով զանոնք հաշմանդամ եւ խեղանդամ ապագայ հայութեան անդամներ։»—Պէտք է նկատի ունենալ, որ այս տողերը գրող պ. Աւօյին ամուսինը նոյն դպրոցներէն մէկուն մէջ պաշտօն կը վարէր ։ Ինչո՞ւ համար պ. Աւօն իր կինը բացառութեանց կարգը չէր դասեր եւ ան ալ մեղսակից էր ցոյց տուած մատաղ սերունդի խողխողման գործին մէջ. Ասոր պատասխանը շատ պարզ է եւ արդէն վերը բացատրեցինք, միայն «Ազատ Բեմ»ի գրչակներուն համար անհասկնալի եւ անբացատրելի է ։

Տօքթ. Կ. Փաշայեան

Աղեքսանդրիա

(Շարունակելի)

ԲԱՋԷՆ ԵՒ ՍՈՂՈՒՆՆԵՐԸ

(Այլաբանութիւն)

(Տես 662րդ թիւն եւ վերջ)

Հետեւեալ օրը բաջէն մի խըրբոտ ճիչ արձակելով հսկայ ծառի կատարից ուժեղ թափով օդը ճեղքեց ու թեւերը զւարթօրէն թափահարելով, կուրծքը օդի մէջ խրելով սուրաց դէպի հեռուները ։ Բաջէի ճիչը արդէն ծառի շուրջը հաւաքված սողուններին սարսափ ազդեց, ամէնքն էլ վայրկենապէս իրենց ծակերը մտան։ «Փող սիրտը դող», սողունները կարծել էին թէ բաջէն ամէն ինչ հասկացել է և այն առաջական ճիչը իրենց իբր ազդ էր նետված Բաջէի կողմից ։ Բայց երբ տեսան բաջէի թռչիլը այլեւս հանգստացան ու գործը սպարէզ եկաւ կրկին ։ Սողունները չըշտապեցին իրենց արժանաւոր առաջնորդին. ու գործը սկսեց խօսել.

—Ինչ էք վախենում բարեկամներ, եթէ բաջէի մի ճիչն անգամ այդքան սարսափելի է ձեզ համար, հապա ինչպէս էք մտածում տապալել նրան ։ Ամօթ է սողուններիս համար. Մենք որ գիտենք ճարպիկութեամբ սողալ, մենք որ հմուտ ենք մեր ամենամեծ թշնամիներին անգամ, անմեղ տարածներ ներկայանալ, էլ ինչից ենք վախենում ։ Դէ՛հ գործի սկսենք. Մտէք ծառի արմատների տակ. գունչերովդ, պոչերովդ, կնճիթներովդ փորեցէք, արմատի ոչ մի ծիլ տակը հող մի թողէք. Մի քանի օրվան այդպիսի աշխատութիւն և ծառը կը տապալվի. բաջէն իր ծանրութեան տակ կը ջախջախէ ։

Սողունները ոգեւորված գործի ճառից, ամէն մէկը տարբերութեամբ մտան ծառի արմատների տակ և սկսեցին փորել, քանդել հողը ։

Ու այդ աշխատութիւնը տեւեց մի քանի օր անընդհատ, մեծ հրճւանքով, որովհետեւ բաջէն այդ օրերը «մնւեին չէր վերադառնում»։ Աշխատանքի 7րդ. օրը գործը սողուններին ժողովի հաւաքելով յայտարարեց ։

—Կեցցէք, այս 7րդ օրն է որ աշխատում էք մեծ եռանդով ։ Ես կարծում եմ որ ծառը այլեւս չի դիմանայ բաջէի ծանրութեան, հաւանական է որ նա այսօր վերադառնայ. օրը մթնում է. հապա եկէք բոլորս բարձրանանք ծառի վրա. տեսնենք ծառը մեր ծանրութեան ինչպէս է դիմանում.

ւորվել նրա ծայրում՝ քթին, որը ալէկոծութիւնից աւելի շատ բարձր ուցած էր լինում ։ Անգործութիւնից մենք չ'կարողացանք ըմբռնել՝ թէ մեզ, որ սովորած չէինք ծովային ճանապարհորդութեան, ինչ վտանգ է սպառնում ։ Այդ մասում մենք հազիւ կարողացանք իրար կողք-կողքի տեղաւորվել։ Նաւը սկսեց կամաց-կամաց հեռանալ ։ Քաղաքի կրակները հետզհետէ սուզւում էին ջրային մակերեւոյթի հորիզոնում. Նաւը արդէն ընթանում էր բաց ծովի վրայ, քամին փչում էր սաստկութեամբ, ալիքները ուժգնութեամբ խփում էին նաւի երկաթեայ կողերին և և օրօրում նրան. անձրեւը դեռ գալիս էր. տախտակամածի նեղ ծակից սանդուխով ես իջայ ներքեւ՝ մեր բունը, նորակոչների մօտ. Նրանցից ոմանք լուռ պարկած էին, ոմանք բարձրաձայն ծաղրածութիւններ էին անում ։

—Տօ տղաք, սիրտս կը խառնէ, ասաց մինը պարկած տեղից վեր կենալով.

—Տօ խմս ալ (**) տեսակը կըլլի, աս ինչէն է ։

Քիչ անց՝ լսվեց՝ օ՜օ՜ոոո՜

—Զոռ, չոռ դուրս կորիր, հոս մի փսխէ, կ'մուռտռի, բարկացաւ մինը։

—Անխելք, դուրս կարելի է գնալ. հոնտեղ ըլլիր ալ ասանեղ խողաբունը չէինք գալ ։

Մնացած տղաները հետզհետէ բոկսեցին միմիանց յետեւից փսխել. ոմանք հանում էին աղիողորմ ձայներ. շատերը իրենց կամ ուրիշի վերայ էին թափում ործը ։ տարածվեց գարշահոտութիւն անկարող լինելով մնալ այդ ապականուած օդի մէջ, ես բարւոք համարեցի բարձրանալ տախտակամածի վերայ, մի անկիւն գտնել և նիրհել, կամ հակառակ դէպքում մնալ նոյնիսկ անձրեւի տակ ։

Խեղճ նորակոչներ, այդ գիշեր այն ինչ էր ձեր քաշածը ։

Առաւօտեան դէմ անձրեւը դադարեց. տղաները մէկիկ-մէկիկ սկսեցին վեր բարձրանալ թարմ օդ շնչելու, յետոյ նրանք սկսեցին մաքրել իրենց զգեստների վերայ թափած ործը ։

Մի քանիսը կանգնած ծաղրում էին նրանց, որոնց զգեստները աւելի շատ էր կեղտոտած ։

—Մենք էլ չենք, սկսեց նրանցից մինը՝ քամելով զգեստը, ինչ որ մեր վզին կապեն ձայն չենք հանի. ի՞նչու պիտի մենք աս ախոռը նստինք. հա՛մ զինուոր երթանք, հա՛մ մեր փողը ծախսենք, կէնտ ասպէս չան օ՞ր քաշենք. դեռ ցարի տղայ ալ կ'հաչվեն մեզ, ձեր հերը...

—Տօ էկէք ամենս ալ մեր զգեստները վեր բերենք, հոստեղ տեղաւորենք հա թէ չէ երթանք առեթի (երրորդ) կըլասի ճամբորդներու քով, թէ չ'թողին՝ զոռով լցվինք. բան չեն կրնայ էնէ. յիսուն հոգի ենք, սրան էկաւ լաւ ըմա կ'ծեծենք. սալտաթ (զինւոր) չե՞նք ։

—Տօ Համօն լաւ կսէ, եկէք երթանք, Հուռռա՛. միւսները նոյնպէս արագութեամբ հետեւեցին առաջինին՝ բարձրաձայն բղաւելով ուռա՛։

Քիչ յետոյ սկսեց գոռում-գոչում նորակոչների և երրորդ կարգի ճանապարհորդների միջեւ։ Վէճը աւելի սաստկացաւ, երբ եկան նաւաստիները և ստիպում էին նորակոչներին վերադառնալ իրենց առաջւայ տեղը. յոյզ անգամ չկար. ովքեր վիճում էին, ովքեր էլ տեղաւորում իրանց իրերը ։ Բարձրացած աղմուկի ձայնից եկաւ կապիտանը և քննելով ամեն ինչ, լուռ տեղի առեց նորակոչներին, որոնք իրենց տարած յաղթանակից մոռցան ամեն ինչ և սկսեցին ծաղրածութիւններ և գժութիւններ ։

Ահա հեռուից երեւում է Նովորոսիյսկը՝ փռված ծովեզերեայ բարձր բլուրների լանջերով ։

—Տօ տղաք, բարձրաձայն սկսեց մինը, որ կոչւում է. Մկօ «կուզէ՞ք քաղաք երթալ պտտելու, բան-ման առնելու» ։

—Ադ ալ խօ՞սք է, ի՞նչու չենք ուզէ, բղաւեցին զանազան կողմերից ։

—Շատ լաւ, տեսէք ինչ եմ ասում, Սօխը (***) ասում է եթէ ինձ կ'խոստանաք հիւրասիրել և պարտել (****) տանել ձեր ծախքով, կ'թողնեմ, թէ ոչ կապիտանին կասեմ որ ոչ ոքի նաւից դուրս չ'թողնէ. մի գուցէ փախչին ։

—Ասոր ան սոխ . . . եթէ փախչիլ ուզէինք ալ ի՞նչու համար մինչեւ աստեղ եկանք, մեր քաղաքէն չէի՞նք կրնայ փախչե՞լ ։

—Դէհ ի՞նչ անենք —սկսեց Մկօն— երբ սոխը կապիտանին ադպէս ըսէ, ան ալ մեզ դուրս չ'թողնէ, ի՞նչ կարող ենք անել ։

—Զ'սես՝ սալդաթ եղանք՝ կրակը ընկանք ասաց մի տղայ ։

—Տօ խչուն աչէ, նոր կ'հասկնայ թէ կրակն է ընկել, պատասխանեց մի ուրիշը ։

—Տօ հըլը տես աս քանի՞ օր է անցել մեր երդմնելու օրէն երբ մեզ հաշւում են սալդաթ, ոչ ուտելիք են տալիս, ոչ փող են տալիս, հըլը ուրիշի ծախսն ալ մենք տանք, հարսխազնա (*****) ունի՞ ինչ է ։

—Դէհ շատ ասէք՝ համաձա՞յն էք թէ չէ՞

—Երթանք, երթանք, վճռողաբար աղաղակեցին մի քանիսը.

Հասանք Նովորոսիյսկ. Նոյնանուն շոգենաւը, որով գնում էինք, խարիսխ նետեց. մինչեւ երեկոյ մնալու էր ։

Փայտեայ կամուրջները դնելուն պէս՝ նորակոչները —կապերը բաց թողած հորթերի նման— հարանհրոցով վազեցին դուրս, դէպ քաղաք ։

Արդէն երրորդ օրն էր որ մենք ոչ մի տաք կերակուր չէինք կերած. մեր առաջի գործը եղաւ ստամոքսի պահանջը գոհացնել. քաղցած գայլերի պէս մենք ներս թափվեցինք մօտակայ փողոցի վերայ գտնւող ճաշարանը և ինչ որ ունէր-չունէր մի լաւ մաքրազարդելուց յետոյ դուրս եկանք փողոց ։ Փչում էր հիւսիսային ցրտաշունչ քամին. արեգակի ջերմութիւնը անզօր էր տաքացնելու ցուրտ օդը ։ Նովորոսիյսկը չնայած որ գտնւում է հիւսիս-արեւմտեան Կովկասում, ամբողջովին ռուսական քաղաք է. աչքի են զարնում գործարանների բարձր ծխնելոյզները Առաջեւից գնում էր ռուս ենթասպան, իսկ մենք հետեւում էինք նրան ։ Կէս ժամ անց մենք մտեցանք քաղաքի ծայրին գտնւող հասարակ շինութիւններին. ենթասպան կանգ առաւ. մենք նոյնպէս ։

(Շարունակելի)

(**) Ախալցխայցոց բառբառը մօտ է տաճկահայ բառբառին, որովհետեւ նրանք Կարնոյ գաղթականներից են ։

(***) Այդ անունով կոչում են Կովկասի հայերը ռուսներին ։

(****) Անառականոց ։

(*****) Փանձարան ։

Պէս պէս սողունները գորշ, սեւ, դեղին մարթերով արագութեամբ սողացին դէպի ծառը. գորտն էլ նրանց հետեւեց և դեռ մի մատաչափ չը սողացած տասն անգամ գլորվեց, մէջքի վրա իր անճոռնի կուրծքը և թաթերը վեր բարձրացնելով. սողունները լոկսեցին ծիծաղել անճոռնի և անշնորք գորտի վրա։ Որտեղից որ էր սուրալով վրա հասաւ բազէն. նրա սուր աչքերը իսկոյն նկատեցին որ ծառը սողունների բնակավայր դառնալու վրա է. նա ծառի տակին աեսաւ մէջքի վրա տապալտկող գորտին. զլուեց ու սուլեց։

— Սողունները այս մաքուր և բարձր ծառի վրա են բարձրացել. գորտն անդամ փորձել է բարձրանալ... չարժէ ապրել այս տեղ... ու թեւերը թափահարելով, թէեւ բաւական յոգնած, բայց իրեն յատուկ ուժով օդը ճեղքելով սլացաւ դէպի հեռուն սարերի ու ձորերի. ծովերի ու դետերի վրայով ու բարձրարերձ ժայռերի մի խոռոչում իրեն համար նոր բուն հատատեց — մաչելի միայն արեւի ճառագայթներին — որոտումների արձագանքին և մրրիկների ահեղագոչ սուլոցներին...

ՎԱՐԴՈ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ելեւմտից նախարար պարոն Պայաքով ապգային ժողովին մէջ ներկայացուցեր է մաքսային նոր օրինագիծը։ Երեսփոխանական ժողովին մեծամասնութիւնը նախարարին բացատրութիւնը ընդունած է բուռն ծափահարութիւնով։

—Գերմանիոյ և Պուլկարիոյ միջեւ կնքուելիք առեւտրական դաշնագրութեան բանակցութիւնները Սոֆիայի մէջ պիտի կատարուին։

—Մայրագոյն արեւելքէն, կը ռուի վայրէն, գովասանական նամակներ կուգան պուլկար հիւանդանոցի մասին Սոֆիայի ռուս դեսպանի տիկնոջ Բախմետեւային։

—Ռուս կառավարութիւնը սիրալի համաձայնութիւն տուած է պուլկար կառավարութեան հետ առեւտրական դաշինք կնքելու համար, և պուլկար բանակցող պատուիրակներ Բեթերսպուրկ հրաւիրած է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն Վիէննա կը հեռագրեն թէ շուտով ռուս կամաւոր նաւատորմիղի բոլոր նաւերը Բոսֆորը անցնելով պիտի երթան, սակայն չը գիտցուիր թէ ո՞ւր։

— Վիէննական թերթի մը Պել կրատէն կը հեռագրեն թէ հոն հասած տեղեկութիւններու համաձայն ամբողջ Բիթոլիոյ նահանգին մէջ բազմաթիւ թուրք զինուորներ կը հալածեն Ցունական Սրպական և Պուլկարական հրոսախմբերը։

ՌՈՒՍԻԱ

10ը ճաքոնացի գերիներ Կազան քաղաքի մէջ ուղղափառ դաւանութիւնը ընդուներ են։

— „Պէրլիներ թագլ“ թերթը կիմանայ որ Ցարը և Վիլհելմ կայսեր շուտով բարեկամական տեսակցութիւն մը պիտի ունենան Սքիրնէվիչի մէջ։ Ցարի հրամանով մեծ պատրաստութիւններ կը տեսնուին այդ նպատակով։

— 27 հոկտեմբերին Մոսկուայի մէջ մօտ 1000 պահեստի զինուորներ խառնակութիւններ ըրեր են և քարեր ու փայտեր նետեր պատերազմական իշխանութեան ներկայացուցիչներուն։ 4 սպայ և 9ը զինուորներ սպաննուած են այդ ընդհարման միջոցին։

ԱՒՍՏՐԻԱ

Զակրեպէն Վիէննա կը հեռագրեն թէ 400ի չափ Խարվատ ուսանողներ հակակառավարական ցոյց ըրեր են. ոստիկանութիւնը միջամտեր է, մեծ ընդհարում տեղի ունեցեր է. երեք խուվատ ուսանողներ վիրաւորված են և 18 հոգի ալ ձերբակալուած։

Միացեալ Նահանգներ

Նիւ-Եորքէն հոկտեմբեր 28ին կը հեռագրեն որ Ռուզվէլթ, ներկայ նախագահը, հասարակապետականներու թիկնածուն 317 ձայն ստացեր է, իսկ անոր հակառակորդը Պարկեր, տէմոկրատներու թիկնածուն 117, ուրեմն Ռուզվէլթ ընտրված է նախագահ Միացեալ Նահանգներու։

— Կոլորոդոյի մէջ նախագահի ընտրութեան պատճառով խռովութիւններ տեղի ունեցեր են. 3 մարդ սպաննուած են Քէնթուկի մէջեւ 7 մարդ ուրիշ տեղեր։ Կոլումբիայի մէջ ալ նոյն՝ առթիւ խռովութիւններ տեղի ունեցեր են, որու միջոցին 7 մարդ սպաննուեր են։

ՖՐԱՆՍԱ

Բարիզէն Վիէննայի թերթերէն մէկուն կը հեռագրեն որ պատերազմական նախարար Անտրէին երեսփոխանական ժողովին մէջ ապտակող Սիվթօն, որուն քանի մը սպաներ մենամարտիլ առաջարկած էին. Ֆրանսայէն փախեր է։

— Հոկտեմբեր 27ին երեսփոխանական ժողովին ոստիկանութեան պետը գացեր է Սիվթօնի տունը զայն ձերբակալելու. Սիվթօն տունը չէ գտնուեր, և կինը յայտներ է որ Բարիզի մէջ կը գտնուի։

— Պատերազմական նախարար Անտրէին առողջական կացութիւնը դէջցած է։ Ջերմ ունի։

—Հոկտեմբեր 28ին նախարարաբետ Կոմպ երեսփոխանական ժողովին ներկայացուցեր է եկեղեցին պետութենէն բաժանելու օրինագիծը։

—Սիֆթօն ձերբակալուած է այն պահուն երբ կուզեր երթալ Սիւրեսէն կապիտան Կային հետ մենամարտելու։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պոլսէն Վիէննա կը հեռագրեն հոկտեմբեր 28ին հետեւեալը։— Ռուս Սեւ ծովեան նաւատորմիղը գալիք շաբթուն պիտի մեկնի Տարտանէլով, Բալթիկեան նաւատորմիղին միանալու նպատակով։

Ռուսերը Կրետէ կղզիին վրայ քարածուխի մեծ տէրօզիտներ պատրաստած են։

—„Տէյլը մէյլ“ թերթը կիմանայ որ Անգլիան մտադիր է Սեւ ծովեան նաւատորմիղին Տարտանէլէն անցնելուն արգելք հանդիսանալ։ Նոյնիսկ որոշած է ուղղակի միջամտել։

— Հոկտեմբեր 28ին Բարիզէն կը հեռագրեն որ Հուլլի միջադէպին առթիւ իրաւարար յանձնախումբը կազմելու համար առաջ եկած գժուարութիւնները բոլորը յարթուած են։ Ռուս կառավարութիւնը համաձայնած է որ Վիկոյի մէջ մնացած չորս սպաները թէ իբրեւ վկաներ և թէ իբրեւ պատասխանատուներ ընդունուին։

— Բեթերսպուրկէն Պերլինի թերթերէն մէյոն հոկտ. 28ին կը հեռագրեն որ Ցանիական ծովային գործակատար մը Արեւելեան Ասիայէն վերադառնալով կը յայտարարէ որ բոլոր օտար զինուորական կցորդները Մանջուրիոյ կռուի դաշտէն հեռացեր են, որովհետեւ լուրջ ճակատամարտներ գարունը պիտի տեղի ունենան։

Վլատիվոսթոքը շատ լաւ ամրացած է։ Բալթիկեան նաւատորմիղին մեծ վտանգներ կը սպառնան Կարմիր ծովին մէջ։

— Հոկտեմբեր 28ին Ռէօթէրի գործակալութեան Թոքիոյէն կը հաղորդեն հետեւեալը։— Լուր տարածուած է որ Շիմոսէլ ժամանակաւոր հաշտութիւն խնդրած է առանց որոշ նպատակի. կենթադրուի որ Շիմոսէլ կուզէ, նախքան Բորթ-Արթուրի ներքին քաղաքամասը գրաւելը ճաքոնացիներու կողմէն յանձնուիլ։

Ժէնէրալ Նոյի լիազօրութիւն ստացած է բանակցութիւնները վարել։

— „Տէյլ մէյլ“ կը հաղորդէ որ ռուս զօրքերուն քաջութիւնը Բ. Արթուրը պաշտպանելու մէջ ա. ներեւակայելի է։

— Բորթ-Արթուրի վրայ եղած վերջին յարձակումներու առն ճաքոնական ռումբ մը ընկեր է Իպշթան ամրութեան վրայ, պայթեցուցեր է ականներու վերահսկման կայարանը։ Այդ պայթման ատեն 600-700 ռուսներ մի անգամէն սպաննուեր են։

— Ցարի հրամանով Վլատիվոսթոքի նաւատորմիղի հրամանատար Պեզոպրազով պաշտօնանկեզած և անոր տեղը անցած է ամիրալ Էյսէն։

— Ամիրալ Սկրիդլով հասած է Մուկտէն. Ալէքսիեւ հասած է Բեթերսպուրկ։

— „Ստանտար“ Քուրոքիի բանակէն կիմանայ որ ռուսները շարունակ կը կրակեն դիրքին ձախ կողմին վրայ. սակայն բանակին դիրքը միշտ անփոփոխելի կը մնայ։

— Բարիզեան թերթ մը կիմանայ որ ճաքանացիները կրցեր են ռուսական ընկղմուած վարեագ զրահաւորը ծովէն հանել։

ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑ ԴՊՐՈՑ

Ի Վառնա

Այս դպրոցը պիտի բացուի Ֆրանսերէն Հայերէն և Պուլկարերէն լեզուներու համար։ Փափաքողք կրնան ուսանիլ նաեւ Գերմաներէն, Անգլիերէն, Ռուսերէն և դաշնակ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ

Շնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի քարտէզը, չքեղ կազմով։

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս բուպլի։ Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աժան ու բաւական խնամքով պատրաստուած քարտէզը։

Հասցէ՝

Ռնիսօն տի Էտիւտեան Արմենիին

Տ'հորոպ

Բիւ տը ղեոզ տը Շիմի

ԺԸՆԷՎ

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна